Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

# Առավոտ

a r a v o t d a i l y

օ ր ա թ ե ր թ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

59/4155/ 31 մարտի 2012 շաբաթ

ISSN 1829-2224
12047

## Ա

# Բոլորի դեմ

Փողոցում մարդիկ ինձ կանգնեցնում, հարցնում են՝ ո՞ւմ տանք ձայնը: Այդ հարցն ինձ շփոթեցնում է՝ իմ խառնվածքով ես չափազանց հեռու եմ կոչեր անելուց եւ նույնիսկ խորհուրդներ տալ դժվարանում եմ: Գուռուները, փրկիչներն ու առաքյալները մեր կյանքում այնքան շատ են, որ, հաստատ, այդ զանգվածում իմ կարիքը չկա: Ես վարվում եմ այս կամ այն կերպ, բայց գիտակցում եմ, որ դա իմ անձնական ընտրությունն է, եւ ոչ մեկին՝ ոչ կնոջս, ոչ երեխաներիս, ոչ այն մարդկանց, ում հետ աշխատում եմ, ոչ էլ, առավել եւս, մնացածներին չեմ քարոզում, չեմ համոզում ինձ ընդօրինակել: Ընտրությունները դրա մասնավոր դեպքն են, այստեղ էլ ես կարող եմ ասել, թե ես ինչպես եմ վարվելու՝ որեւէ մեկին չպարտադրելով նույնն անել:

Ես քվեարկելու եմ բոլորի դեմ, այսինքն՝ ինչ-որ մի ձեւով անվավեր եմ դարձնելու իմ քվեաթերթիկը: 2007-ին եւ 2008-ին ես ձայնս տվել եմ, համապատասխանաբար, «Ժառանգությանն» ու Լեւոն Տեր-Պետրոսյանին: Այս ցիկլում ես նույնը չեմ անի՝ շարունակելով բարձր գնահատել Հայաստանի առաջին նախագահի իսկական ավանդը պետության կայացման եւ Արցախի ազատագրման գործում: Ավելացնեմ նաեւ, որ ՀԱԿ-ի՝ իշխանության հասցեին քննադատության 70 տոկոսի հետ ես համաձայն եմ: Բայց այս պահին Կոնգրեսի քարոզչության հիմքում հետեւյալ թեզն է՝ կամ կանգնում եք ժողովրդի, կամ էլ ավազակապետության կողքին, իսկ ժողովուրդը, բնականաբար, ՀԱԿ-ն է մարմնավորում: Հենց այդ թեզով են առաջնորդվում ՀԱԿ-ի պատանի եւ ոչ այնքան պատանի «խունվեյբինները»: Կարող եմ կրկնել Վլադիմիր Նաբոկովի խոսքը՝ բոլշեւիկների (իմա՝ հարթակային հռետորների) հետ իմ հակասությունները գեղագիտական են:

Բոլշեւիկյան պարանոյայի չափաբաժինն ամենաքիչն է «Ժառանգության» մեջ: Սակայն այդ կուսակցության ցուցակում անսպասելիորեն հայտնվեցին մարդիկ, որոնք չափազանց հեռու են ազատականության, ժողովրդավարության եւ, որն ինձ համար էական է, լրագրության մասին իմ պատկերացումներից: Հօգուտ այդպիսի ցուցակի ես չեմ կարող քվեարկել:

Դուք կհարցնեք, թե ինչու քաղաքական ուժի որոշ մասի իմ բացասական ընկալումը ես տարածում եմ այդ ամբողջ ուժի վրա: Բացատրեմ: Պատկերացրեք, ֆուտբոլային թիմ, որտեղ կենտրոնական հարձակվողը եւ հենակետային կիսապաշտպանը, ենթադրենք, ռասիստներ են՝ նրանք պարբերաբար ագրեսիվ հայտարարություններ են անում սեւամորթների հասցեին: Եթե այդ թիմի մարզիչը, ակումբի ղեկավարությունը հրապարակավ չեն դատապարտում նման հայտարարությունները, կարո՞ղ եմ ես եզրակացնել, որ ռասիզմը այդ թիմում խրախուսվում է:

Ի տարբերություն «Ժառանգության» եւ ՀԱԿ-ի՝ նախընտրական պայքարի մնացած մասնակիցներն ինձ համար ընդհանրապես մերժելի են եւ իմ ձայնը տալու առումով քննարկման առարկա չեն կարող լինել: Հենց դրա համար էլ ես քվեարկելու եմ բոլորի դեմ:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

# Երբ Տեր-Պետրոսյանը ինչակ էր

Երեկ Ազատության հրապարակում կայացած հանրահավաքին ՀՀ առաջին նախագահը եկավ ՀԱԿ կենտրոնական գրասենյակի ներկայացուցիչների ուղեկցությամբ: Մինչ հարթակ բարձրանալը՝ առաջին նախագահը զրույցի բռնվեց ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանի եւ ՀՀՇ անդամ, նախկին բարձրաստիճան պաշտոնյա Երջանիկ Աբգարյանի հետ: Վերջինիս հետ առաջին նախագահը ողջագուրվեց: Լյուդմիլա Սարգսյանը ժպտալով վրա բերեց՝ «ինչակ Ջոն»: «Ես որ ինչակ էի, ինքն ո՞ւր էր»,- հումոր արեց Լեւոն Տեր-Պետրոսյանն ու բարձրացավ հարթակ:

Հանրահավաքի ոչ հումորային մասը՝ 3-րդ էջում:




## ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

### Չկա հայտարարություն՝ չկա հանցա՞նք

«Ժառանգություն» կուսակցությունը երեկ ահազանգել էր Սյունիքի մարզում՝ Գորիսում, նախընտրական շտաբ բացելու հետ կապված խոչընդոտների եւ մարզպետի ու ԱԺ պատգամավորի միջեւ տեղի ունեցած միջադեպի մասին: Ու թեեւ այդ առնչությամբ կուսակցությունը հանդես էր եկել հրապարակային հայտարարությամբ, այդուհանդերձ, իրավապահները համարում են, որ դա չեն լսել ու միջադեպին ընթացք տալու համար սպասում են առանձին եւ հատուկ՝ հանցագործության մասին հաղորդագրության:

Կարդացեք էջ 3:

### «Մեր կոալիցիոն գործընկերոջ մասին ավելի լավ կարծիքի եմ»

Երեկ «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցի ընթացքում ՀՀ նախկին արտգործնախարար, ներկայումս «Բարգավաճ Հայաստան» կուսակցության անդամ Վարդան Օսկանյանն ասել է. «Նախորդ չորս տարիներին իշխող քաղաքական կոալիցիան ձեւական է եղել, եւ Հանրապետականն էլ արել է այն, ինչ ցանկացել է, ուստի երկրում առկա սոցիալ-տնտեսական ծանր վիճակի պատասխանատվությունն ամբողջությամբ Հանրապետականի վրա է»: Արձագանքելով այս պնդմանը՝ ՀՀԿ մամլո խոսնակ, Ազգային ժողովի փոխնախագահ Էդուարդ Շարմազանովն ասաց. «Եթե վերջերս մեծ ոգեւորությամբ «Բարգավաճ Հայաստանի» անդամ դարձած Վարդան Օսկանյանը կարծում է, որ այն ուժը, որին ինքը անդամակցել է՝ «Բարգավաճ Հայաստանը», վերջին չորս տարիներին զբաղված է եղել միայն ձեւականությամբ եւ ունեցել է բացառապես դիտորդի կարգավիճակ՝ դա իր խնդիրն է: Ես մեր կոալիցիոն գործընկերոջ մասին ավելի լավ կարծիքի եմ»:

### ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերը մտահոգ են

Aravot.am-ի հարցին՝ ՀՅԴ Հայ Դատի հանձնախմբերը մեր ներքաղաքական իրավիճակներին մասնակից դառնո՞ւմ են, ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը պատասխանեց. «Իհարկե, արտաքին եւ ներքին քաղաքականությունը փոխկապակցված է: Չես կարող հաջող արտաքին քաղաքականություն իրականացնել՝ ունենալով ներքին լուրջ խնդիրներ, պառակտված հասարակություն: Այդ խնդիրը կապում է բոլոր կառույցներին իրար հետ, անհանգիստ են, մտահոգ են»:

## ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

### Համագումար

Այսօր, ժամը 12.40-ին, ՀՀ կառավարության նիստերի դահլիճում տեղի կունենա «Օրինաց երկիր» կուսակցության Երիտասարդական միության VIII համագումարը:

### Եղանակ

Երեւան +3 +15, Շիրակ -7 +6, Կոտայք -7 +6, Գեղարքունիք -7 +6, Լոռի -5 +13, Տավուշ -3 +14, Արագածոտն լեռներ -7 +6, Արագածոտն նախալեռն. 0 +15, Արարատ 0 +16, Արմավիր 0 +16, Վայոց Ձոր լեռներ -7 +6, Վայոց Ձոր նախալեռն. -5

## Գյումրիում արդեն ինչել են ընտրակրակոցներ

### ԲՀԿ-ական «Շեկոն» ու ՀՀԿ-ական «Տանկը» թունդ ռազբորկայի մեջ են

Մեր աղբյուրների հաղորդմամբ՝ ընտրությունների հողի վրա երեկ Գյումրու Մսի կոմբինատ թաղամասում թունդ ռազբորկա է տեղի ունեցել ԱԺ պատգամավոր Մարտուն Գրիգորյանի ու Գյումրու քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու ընկերական շրջապատի միջեւ: Կռվի թեման եղել է այն, թե ով շատ ձայներ կհավաքի թիվ 34 ընտրատարածքում՝ ԲՀԿ-ն, թե ՀՀԿ-ն: Մարտուն Գրիգորյանը ԲՀԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատուն է, իսկ Գյումրու քաղաքապետը՝ ՀՀԿ Շիրակի մարզային կառույցի պատասխանատուն: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ Մարտուն Գրիգորյանի շրջապատից «Շեկոն», ով աշխատում է պատգամավորի ընտանիքին պատկանող Գյումրու ավտոկայանում եւ ապրում է Մսի կոմբինատ թաղամասում, ռազբորկա է սկսել «Տանկի» հետ, որն էլ քաղաքապետի որդու՝ Սպարտակի ընկերական շրջապատից է: «Շեկոն», բնականաբար, ձայներ է հավաքում ԲՀԿ-ի համար, «Տանկն» էլ՝ ՀՀԿ-ի, արդյունքում այս երկուսը բախվել են իրար՝ թե այս ընտրատարածքում ով ավելի մեծ հեղինակություն ունի ու ով ավելի շատ ձայներ կունենա: Նախնական տեղեկություններով՝ ռազբորկան ուղեկցվել է կրակոցներով. երեկոյան ժամը 11-ի սահմաններում դրանք ինչել են քաղաքի փողոցներով արագ սլացող «Մերսեդես»-ներից: Ի դեպ, մեզ չհաջողվեց պարզել երիտասարդների իրական անուն-ազգանունները. մեզ փոխանցեցին, որ ամբողջ քաղաքում նրանք հենց այս մականուններով են հայտնի:

Մենք այս տեղեկությունները փորձեցինք ճշտել Ոստիկանության Շիրակի մարզային վարչության պետ Կարեն Բաբակեխյանից, որը փոխանցեց, թե իրենք ահազանգ են ստացել առ այն, որ Մսի կոմբինատ թաղամասում ժամը 13.00-ի սահմաններում երիտասարդների երկու խմբերի միջեւ ծեծկռտուք է եղել, սակայն դրդապատճառը դեռեւս հայտնի չէ, հայտնի չէ նաեւ՝ նրանք ԲՀԿ-ական են, մեթե ՀՀԿ-ական: Կրակոցներ հնչելու թեմայով էլ ոստիկանապետն ասաց, որ տեղեկությունները հակասական են, ժողովրդի կեսը ասում է՝ հնչել են: Ոստիկանապետը նաեւ հավելեց, որ փորձում են ամեն ինչ պարզել՝ գիշերն աշխատելով: Նշենք, որ նրան մենք դիմել էինք ժամը 23.30-ի սահմաններում, եւ նա դեռ աշխատավայրում էր: Նա նաեւ շեշտեց, որ մարմնական ծանր վնասվածքներ ստացածներ չկան, վիրավորներ՝ նույնպես: Այս պահին ընթանում է քննություն: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ մեծ թվով երիտասարդներ տարվել են ոստիկանություն՝ հարցաքննության, կան նաեւ կալանավորվածներ:

### ՀԱԿ-ի նամակը՝ ԿԸՀ-ին

ՀԱԿ-ի շտաբի ղեկավար Լեւոն Զուրաբյանը նամակ է հղել ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանին որում ասվում է. «Տեղեկացնում եմ, որ Հայաստանի Հանրապետական կուսակցությունը նախընտրական քարոզչությունը դեռեւս չսկսված՝ ՀՀ ողջ տարածքով մեկ կազմավորել է հազարավոր ընտրական շտաբներ, որոնց վրա տեղադրված ցուցանակները ներառում են կուսակցությանը քվեարկելուն միտված ուղղակի կոչեր, մասնավորապես վերջինիս համագումարի կողմից հաստատված կարգախոսը: Ղեկավարվելով Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 8-րդ մասով՝ միջնորդում եմ օրենքով սահմանված ժամկետում պարտավորեցնել վերացնել այդ խախտումը: Հակառակ դեպքում, նույն հոդվածի 2-րդ մասով պարտավոր եք համապատասխան հայցով դիմել դատարան կուսակցության ընտրական ցուցակն ուժը կորցրած ճանաչելու նպատակով»:

# Հանրապետական կուսակցության խոստումները-1

Հայաստանի Հանրապետական կուսակցության նախընտրական ծրագիրը սկսվում է կուսակցության նախագահ Սերժ Սարգսյանի խոսքով: «Միասին ամրացրեցինք պետությունը, միասին էլ կարող ենք լուծել մարդուն հուզող առաջնային խնդիրները: Մեզ փոփոխություններ են անհրաժեշտ: Այդ փոփոխություններն իրականացնողները մենք ենք, բոլորս միասին՝ Հանրապետականի փորձով եւ առաջնորդությամբ: Հինգ տարի առաջ մենք ասում էինք՝ «Քե՛զ համար Հայաստա՛ն: Հիմա արդեն հասել ենք այն հանգրվանին, երբ վստահորեն պնդում ենք՝ Ավելի լավ Հայաստան յուրաքանչյուրի համար»,- մասնավորապես ասվում է ՀՀԿ նախագահի խոսքում, որը եզրափակվում է այսպես. «Ուրեմն՝ հավատանք, որ փոխենք: Մեծով ու փոքրով, շինականով ու գիտնականով, հաջողակով ու դեռ փնտրողով»:

Ծրագրի նախաբանում Հանրապետական կուսակցության ձեռքբերումների թվարկումն է՝ ՀՀԿ տեսանկյունից: Մասնավորապես. «Մենք կարողացանք մեղմել ներքին քաղաքական պառակտվածության եւ անհանդուրժողականության դրսեւորումները», «Երկրի բնականոն կյանքը զերծ պահեցինք մեր հարեւանությամբ ընթացող պատերազմական գործողություններով պայմանավորված ցնցումներից», «Ապացուցեցինք երկիրն ամենաբարդ իրավիճակներից դուրս բերելու եւ այն ճգնաժամային պայմաններում կառավարելու մեր կարողությունը», «Մեղմեցինք համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական ազդեցությունները», «Բանակաշինությամբ եւ արտաքին ակտիվ քաղաքականությամբ մենք ապահովեցինք մեր երկրի անվտանգությունը՝ ամրապնդելով մեր պարտադրած խաղաղության երաշխիքները»...

ՀՀԿ-ն նաեւ բացթողումներն է նշել, բայց մինչ այդ արդարացել է. «Մենք սկիզբ ենք դրել լայնամասշտաբ բարեփոխումների նոր փուլի, որը ներառում է հասարակության կենսագործունեության բոլոր ոլորտները: Արտաքին մարտահրավերների բացասական հետեւանքների հաղթահարումը մեզնից խլեց զգալի ռեսուրսներ, որի արդյունքում բարեփոխումների մի մասը դեռեւս չի հասել իր տրամաբանական ավարտին»:

Բացատրելով օբյեկտիվ պատճառները՝ ՀՀԿ-ն թվարկում է բացթողումները. «Մեզ դեռեւս չի հաջողվել հաղթահարել աղքատությունը եւ կոռուպցիան, ապահովել արդար մրցակցություն բարենպաստ գործարար միջավայրում: Մենք պետք է հաղթահարենք այն քաղցկեղը, որով հիվանդ է մեր հասարակությունը, եւ որը կոչվում է կոռուպցիա: Այս ճանապարհին կիրառվելու են ե՛ւ վիրահատական, ե՛ւ մյուս բոլոր օրինական մեթոդները»:



Այս նախաբանից հետո Հանրապետական կուսակցությունը ոլորտ առ ոլորտ ներկայացնում է իր ծրագրերը եւ անելիքները՝ գուգահեռ նշելով արդեն արվածը:

Զորօրինակ՝ «Ուժեղ եւ պաշտպանված Հայաստան» գլխում նշվում է. «Աննախադեպ ավելացրել ենք զինված ուժերի կրակային, այդ թվում՝ հեռահար, մարտավարական եւ հետախուզական կարողությունները՝ ինչպես ներկրված, այնպես էլ սեփական արտադրության սպառազինության եւ ռազմական տեխնիկայի ներդրման միջոցով»: Եվ խոստանում են. «Պաշտպանական ներուժը համապատասխանեցնելու ենք արհեստավարժության, կարգապահության, թափանցիկության եւ վերահսկելիության արդիական չափանիշներին: Հասարակության մեջ ամրապնդելու ենք զինվորական պարտադիր ծառայության ինստիտուտի նկատմամբ վստահությունը՝ սոցիալական եւ կրթական պայմանների շարունակական բարելավման միջոցով: Պետությունը զորացրվողների համար ապահովելու է ուսման եւ աշխատանքի արտոնյալ հնարավորություններ»: Թերեւս՝ ամենադժվար իրականացվող խոստումներից էին:

«Հայաստանի միջազգային հեղինակության ամրապնդումը» գլխում խոսվում է արտաքին քաղաքականության մասին: Ի թիվս այլեւայլ ծրագրերի՝ կապված ԵՄ, ՌԴ, Չինաստանի, ԱՄՆ-ի եւ այլ երկրների հետ, նշվում է, որ «շարունակվելու են ջանքերը ցեղասպանությունների կանխարգելման եւ դատապարտման, ինչպես նաեւ դրանց հետեւանքների վերացմանն առնչվող խնդիրները միջազգային հանրության օրակարգում պահելու համար»: Նաեւ խոստանում են, որ Ցեղասպանության 100-ամյակի նախաշեմին հայության «ջանքերն են համախմբելու»՝ Հայոց ցեղասպանության ճանաչման համար:

Ղարաբաղն առանձին գլխով է ներկայացված՝ «Արցախը եղել է, կա եւ կլինի հայկական» խորագրով: Այս առումով նշվում է, որ «առաջընթաց է արձանագրվել ազգային ինքնորոշման իրավունքի սկզբունքի իրացման գործում»: Ու խոստանում են շարունակել աշխատանքները՝ ԼՂՀ-ին բանակցություններում որպես լիիրավ կողմ ներգրավելու ուղղությամբ:

Սփյուռքի հետ հարաբերություններին նույնպես առանձին բաժին է հատկացվել. «Ազգային միասնություն, ամուր սփյուռք» գլխում գրված է. «Օգտագործելով երկքաղաքացիության ինստիտուտը եւ հայրենադարձության պետական ծրագիրը՝ ստեղծելու ենք նպաստավոր միջավայր Հայաստանի տնտեսության մեջ սփյուռքահայերի ներգրավվածության ավելացման եւ ներդրումների խրախուսման համար»: Թերեւս՝ հերթական դժվար իրագործելի ծրագրերից մեկն էլ սա է:

Արդարադատության համակարգը «Արդարություն յուրաքանչյուրի համար» գլխում է ներկայացված: Որպես ձեռքբերումներ նշվում են ՍԴ դիմելու «իրավունքի իրացման երաշխիքների ստեղծումը», առցանց տեղեկատվական համակարգի ներդրումը՝ «դատարանների գործունեության թափանցիկությունն ու դատական ակտերի մատչելիությունն ապահովելու համար», վարչական մարմինների գործողություններն ու անգործությունը, ակտերը բողոքարկելու նոր հնարավորությունների ստեղծումը: Խոստումների մեջ մտնում է «գործարկելու ենք արդարադատության ակադեմիան», գալիք 5 տարիների ընթացքում «առցանց «մեկ կանգառ» սկզբունքով արդարադատության ոլորտի ծառայությունների առնվազն 80 տոկոսի տրամադրան» ապահովումը: Ինչպես նաեւ բազմաթիվ այլ խոստումներ՝ ոլորտի թափանցիկությունն ապահովելու համար՝ «ստեղծելու ենք», «խստացնելու ենք», «բարձրացնելու ենք», «ներդնելու ենք», «խթանելու ենք»...

Տնտեսական քաղաքականության տեսլականները ՀՀԿ նախընտրական ծրագրում հանգրվանել են «Տնտեսական քաղաքականության փոփոխությունը» գլխում:

Բնականաբար, այստեղ անդրադարձ կա համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին, որը, ըստ ՀՀԿ-ի, «բացահայտեց մեր տնտեսության ուժեղ եւ թույլ կողմերը»: ՀՀԿ-ն մի վիճելի պնդում է անում. «Ամբողջությամբ վերականգնել ենք նախաճգնաժամային ՀՆԱ-ի ցուցանիշը, տնտեսությունը դարձրել ավելի բազմազան եւ դրանով այսօր արդեն ավելի ուժեղ ենք»:

Խոստումներն առանձնապես շռայլ չեն, սակայն մի տեսակ անհավատալի են. «Մեր տնտեսական քաղաքականությունն ուղղված է լինելու միջին եւ փոքր բիզնեսի կայացման եւ զարգացման երաշխիքների ստեղծմանը: Մենք պարտավոր ենք ապահովել հավասար մրցակցային պայմաններ եւ բացառել խոշոր բիզնեսի կողմից գերիշխող դիրքի չարաշահումները»:

Առանձին բաժին է հատկացված արդյունաբերությանը՝ «Արդյունաբերական քաղաքականության նոր մոտեցումներ» գլխում ՀՀԿ-ն նշում է. «Նպատակաուղղված քաղաքականության շնորհիվ կանխվել է հազարավոր աշխատատեղերի կրճատումը եւ ստեղծվել են նորերը: Արդյունաբերության տեսակարար կշիռը ՀՆԱ-ում հասցրել ենք 17 տոկոսի: 32 հազար փոքր եւ միջին ձեռնարկություններ օգտվել են հարկային արտոնություններից: Առաջին անգամ մշակվել է արդյունաբերական քաղաքականության ծրագիր: Մասնավոր բիզնեսի հետ երկխոսությամբ համաձայնություն է ձեռք բերվել 11 առաջնահերթ ճյուղերի զարգացման շուրջ: Ժամանակակից սարքավորումների եւ հոսքագծերի ներդրմանն ուղղված շուրջ 82 մլրդ դրամի ներդրումային ծրագրեր ստացել են հարկային արտոնություններ: ՀՀ օրենսդրությամբ նախադրյալներ ենք ստեղծել ՀՀ-ում ազատ տնտեսական գոտիների ձեւավորման համար»: Սա այն՝ ինչ, ըստ ՀՀԿ-ի, արվել է: Իսկ թե ինչ է սպասվում՝ ավելի հետաքրքիր է. «ՀՀԿ-ն արմատական փոփոխություն է կատարում արդյունաբերական քաղաքականության մոտեցումներում: Այսուհետ պետությունը պատասխանատու է լինելու ոչ միայն բարենպաստ բիզնես միջավայրի համար, այլեւ ուղղակիորեն մասնակցելու է ճյուղային արդյունաբերական քաղաքականության իրականացմանը: Նոր մոտեցումը երաշխավորելու է մասնավոր ներդրումների շեշտակի աճ, հազարավոր ժամանակակից աշխատատեղերի ստեղծում, մրցունակ ճյուղերի առաջանցիկ տեմպերի եւ արտահանման ծավալների ավելացում: Ազատ տնտեսական գոտիների գործարկումը, տեխնոպարկերի եւ բիզնես-ինկուբատորների զարգացումը կնպաստեն մեր տնտեսության մրցունակության աճին եւ վերազգային կորպորացիաների համար գրավիչ դառնալուն»:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱՐՍԵՂՅԱՆ
(Շարունակելի)

## ՀՀ ոստիկանապետը հրահանգել է աշխատել նոր մոտեցումներով

Վերջին մեկ-երկու շաբաթների ընթացքում ՀՀ ոստիկանությունը նախորդ ընտրական տարիների համեմատ աննախադեպ ակտիվությամբ է արձագանքում ընտրական գործընթացներին առնչվող խնդիրներին եւ ամեն օր հանդես է գալիս ընտրությունների հետ փոխկապակցված՝ ընտրացուցակներ, պետռեգիստր, թեկնածուների գրանցում եւ այլն, մինչեւ անգամ երեք կամ չորս հայտարարություններով կամ պարզաբանումներով: Անկախ դրանց բովանդակության հետ ընտրական գործընթացներում ներգրավված շահագրգիռ սուբյեկտների համաձայնության կամ անհամաձայնության հանգամանքից, ոստիկանության ակտիվությունը միայն ողջունելի է, միայն թե պարզ չէ՝ դա պայմանավորված է նախորդ տարիների համեմատությամբ այս տարի ավելի շատ ծագած խնդիրներո՞վ, թե՞ ահազանգերին արագ արձագանքելու իմիտացիայի նպատակ է հետապնդում:

«Դա պայմանավորված է աշխատանքային նոր մոտեցումներով: Եկեք չհամեմատենք նախորդ եւ այս ընտրությունները: Միայն ասեմ, որ այս ընտրությունների ժամանակ ՀՀ ոստիկանապետը, եթե հետեւում եք լրատվությանը, պարբերաբար հանդիպումներ է ունենում համակարգի անձնակազմի հետ, եւ մեզ՝ հասարակայնության հետ կապերի վարչությանը, հրահանգել է որեւէ հրապարակում անարձագանք չթողնել: Դրանց բոլորին պետք է պարզաբանումներ տրվեն: Նոր մոտեցումը կայանում է հենց նրանում, որ հասարակությանը հուզող եւ լրատվամիջոցներում եղած բոլոր հարցադրումները ոստիկանության կողմից արձագանք ունենան, եւ որեւէ հարցական չպետք է մնա»,- Aravot.am-ի հարցին ի պատասխան՝ ասաց ՀՀ ոստիկանության հասարակայնության հետ կապերի եւ լրատվության վարչության պետ Աշոտ Ահարոնյանը:

Մեր հարցին՝ կարծում եք դա նպաստելո՞ւ է ոստիկանության հանդեպ հասարակության կամ քաղաքական ուժերի վստահության բարձրացմանը կամ ավելի «ջերմ հարաբերությունների» հաստատմանը, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչն արձագանքեց. «Ավելի շատ, կարծում եմ, դա կնպաստի, որպեսզի ընտրությունները որակյալ անցնեն, ինչը ձեր, իմ եւ ոստիկանության ու յուրաքանչյուր քաղաքացու ցանկությունն ու պահանջն է»:

Ն. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# ՀԱԿ-ը հանրության օգնությունն է հայցում

## Երեկվա հանրահավաքում նաեւ այսպիսի կոչեր հնչեցին



«Ես Հայ ազգային կոնգրեսի անդամ եմ, դուրս չեմ եկել եւ դեռ հույսերս չեմ կորցրել»,- երեկ Ազատության հրապարակում «Առավոտի» հետ զրույցում ասաց «Քրիստոնեա-ժողովրդավարական վերածնունդ» կուսակցության նախագահ Սոս Գիմիշյանը՝ փարատելով զարմանքը, որ մասնակցում է ՀԱԿ-ի հանրահավաքին: Սոս Գիմիշյանն ասաց, որ ինքը, ի տարբերություն «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնության ներկայացուցիչ Սամվել Հարությունյանի, չի կասեցրել իր անդամությունը ՀԱԿ քաղխորհրդին, պարզապես այս փուլում քաղխորհրդի նիստերին իրեն չեն հրավիրում, հրավիրում են ՀԱԿ նախընտրական դաշինքի անդամ կուսակցությունների ներկայացուցիչներին: Հիշեցնենք, որ մոտ մեկ ամիս առաջ «Հայ կամավորականների համախմբում» նախաձեռնության ներկայացուցիչը, Սոս Գիմիշյանը, ՀՀ պաշտպանության նախկին նախարար Վաղարշակ Հարությունյանի ղեկավարած «Ազգային վերածնունդ» եւ Գառնիկ Մարգարյանի ղեկավարած «Հայրենիք ու պատիվ» կուսակցությունները հայտարարեցին, որ ՀԱԿ-ի հետ մարտավարական եւ ռազմավարական լուրջ տարաձայնությունների պատճառով հրաժարվում են Կոնգրեսի նախընտրական դաշինքում ընդգրկվելուց: Սոս Գիմիշյանն «Առավոտին» ասաց, որ իրենց անհամաձայնությունները դեռ օրակարգում են, եւ կայանալիք ընտրությունների արդյունքները ցույց կտան՝ ով է ճիշտ, ով՝ սխալ: Բայց դա չի խանգարում, որ, ասենք, ինքը՝ Գիմիշյանը, առաջիկա ընտրական շրջանում ՀԱԿ-ի համար աշխատանք ծավալի. «Օրինակ՝ Ներսիսյան Գագիկը իմ ընկերն է, մենք միասին լուսահոգի Եգորյանի պատգամավորական խմբում ենք եղել, ինքն առաջադրվել է Արտաշատում, եւ ես գնալու եմ՝ իրեն օգնեմ: Ինքը նաեւ ՀԱԿ-ի համար է աշխատելու, ես հո իմ ընկերոջը չե՞մ խանգարելու, օգնելու եմ: Տա Աստված, որ իրենց նախընտրած մարտավարությամբ ՀԱԿ-ը կեսից ավելին հավաքի, բայց ես համոզված եմ, որ մեր ասածն ավելի ճիշտ է: Ամեն դեպքում, մայիսի 6-ին կտեսնենք: Կարող է՝ մենք ենք սխալ»:

Գիմիշյանը համոզված է, որ ընտրություններով մանդատ վերցնելու ճանապարհով հայաստանյան խնդիրներին լուծում չկա, հետեւաբար իրենք առաջարկել են ժողովրդին ակտիվացնել, վստահությունը վերականգնել. «Անկեղծորեն եւ ազնվորեն պետք է ժողովրդին ասել, որ ընտրությունների միջոցով լուծում չկա, պետք է ակտիվանանք, հավաքվենք, էստեղ կանգնենք, ստիպենք հրաժարական տան ու դրանից հետո նոր ընտրություններ անցկացնենք: Այսինքն՝ արտահերթ ընտրությունների միջոցով: Այն, ինչը որ ՀԱԿ-ն ասում էր ու, ցավոք, ոչինչ չարեց: Սա է տարաձայնությունը: Իրենք փորձում են ճղճիմ խնդիր դարձնել՝ ցուցակում տեղ եւ այլն, բայց երբ մենք այս հարցերը բարձրացնում էինք, ոչ ցուցակ կար, ոչ էլ: Մեղքն իրենց վիզը»: Գիմիշյանը ցանկացել է Երեւանի Նոր Նորքում առաջադրվել մեծամասնական ընտրակարգով, քանի որ ՀԱԿ-ի շտաբի պետ է եղել այդ տարածքում, բայց ՀԱԿ-ում դեմ են եղել. «Միջոց ունենայի, հիմա էլ կառաջադրվեի, անկախ նրանից՝ այնտեղ ՀԱԿ-ի ներկայացուցիչ կա, թե ոչ, եւ ցույց կտայի՝ Մասիվում ով ինչ գործ է արել, ով ճանաչում ունի»: «Առավոտի» դիտարկմանը՝ այդ «տղայական» մոտեցումը չէ՞ արդյոք ընդդիմության խնդիրը, քանի որ հենց նույն սկզբունքով ՀԱԿ-ն ու «Ժառանգությունն» իրար դեմ թեկնածուներ են դրել, եւ այդ պարագայում իշխանությունը կարող է կեղծելու ջանքեր էլ չգործադրել, մեր զրուցակիցն ասաց. «Շատ վատ բան է, որ լուծումներ չեն գտել»:

Իսկ ՀԱԿ-ի երեկվա հանրահավաքը, ինչպես ասաց հանրահավաքը վարող ՀՀՇ վարչության նախագահ Արամ Մանուկյանը, տեղեկատվական բնույթի էր: Իշխանության քննադատությունից, հանրությանը՝ առաջիկա ընտրական գործընթացներում ակտիվ ներգրավվելու կոչերից զատ՝ ՀԱԿ-ը ներկայացրեց իր համամասնական եւ մեծամասնական ցուցակները՝ հավաքվածների հավանությունը եւ աջակցությունը ստանալու համար: Ի տարբերություն ՀՀԿ ցուցակների՝ ՀԱԿ-ի համամասնական եւ մեծամասնական ցուցակները Մանուկյանը համարում է ազնիվ մարդկանց ցուցակներ եւ ասում, որ առաջիկա պայքարը լինելու է ազնիվների եւ գողերի պայքար: Այն ընթացքում, երբ նա ՀՀԿ ցուցակից անուններ էր հրապարակում՝ «Խոսրով Հարությունյան, Հայկ Բաբուխանյան, Արտաշես Գեղամյան եւ այլ ժողգործիքներ...», հանրահավաքի մասնակիցները սուլում էին եւ «ամոթ» վանկարկում: Արամ Մանուկյանը նույնիսկ ցուցադրեց ՕԵԿ-ի բաժանած մուրաբաները: Նմանատիպ արձագանքներ եղան նաեւ այն ժամանակ, երբ Նիկոլ Փաշինյանն իր ելույթում արտասանեց ՀՀԿ համամասնական եւ մեծամասնական ցուցակներում ընդգրկված մականունավոր մարդկանց անունները: «Սերժ Սարգսյանը քաղաքական գործչի փեշակը շփոթել է Ֆոկուսնիկի փեշակի հետ: Որովհետեւ Ֆոկուսնիկներն են, որ կրկեսի հարթակում, սեւ ցիլինդրի մեջ մկանը դիոլ սարքելով, ուզում են հավատացնել, թե մուկը փոխվեց, դարձավ դիոլ: Էդ նույն Սերժիկ Սարգսյանն էր, որ ամիսներ առաջ բարձր ամբիոնից ճամարտակում էր բիզնեսի եւ իշխանության տարանջատման մասին: ՀՀԿ-ականները թմբկահարում էին, թե մականունավորներն այլեւս տեղ չեն ունենալու մեր խորհրդարանում: Հիմա Սերժիկ Սարգսյանի ղեկավարած ՀՀԿ-ն մեծամասնական ու համամասնական ցուցակով պատգամավորության թեկնածու է առաջադրել մականունավոր բիզնեսմեններին (ընթերցում է անունները- Ն. Գ.)»,- ասաց Նիկոլ Փաշինյանը՝ հավելելով. «Այս թեմայով հրապարակային տասնյակ խոստումները դրժելուց հետո նորմալ մարդը պիտի գետինը մտներ, բայց Սերժիկ Սարգսյանը անամոթաբար կանգնում է մարդկանց առաջ եւ նրանց հավատալու կոչ է անում: Ինչի՞ն հավատանք, Սաշիկի պուճուր ախպեր, որ «Լֆիկ Սամոն» էլ օլիգա՞րխ չի, այլ կարկառուն քաղաքական, հասարակական գործի՞չ»:

Հանրահավաքում ելույթ ունեցան նաեւ ՀԱԿ համակարգող, ՀԱԿ նախընտրական շտաբի պետ Լեւոն Զուրաբյանը, «Հանրապետություն» կուսակցության քաղխորհրդի նախագահ Արամ Սարգսյանը, ՀԺԿ առաջնորդ Ստեփան Դեմիրճյանը, հայտնի գործարար Խաչատուր Սուքիասյանը: Վերջինս շնորհակալություն հայտնեց հանրահավաքի մասնակիցներին այս տարիների ընթացքում իրեն եւ իր ընտանիքին սատարելու համար, կոչ արեց գնալ ընտրությունների՝ գիտակցումով, որ Հայաստանին այլընտրանք է պետք, եւ դա ՀԱԿ-ն է: Նաեւ հավաստիացրեց, որ անկախ նրանից, որ ԿԸՀ-ն չգրանցեց իր թեկնածությունը, ինքը շարունակելու է իր ներդրումներն ու պայքարը՝ հանուն Հայաստանի վաղվա օրվա: Ելույթ ունեցողները հիմնականում քննադատության ենթարկեցին այս օրերին ՀՀԿ տարբեր ներկայացուցիչների կողմից հնչած հավակնությունը՝ թե ՀՀԿ-ն ակնկալում է ընտրողների ձայների 40 տոկոսը ստանալ, որ ի հեճուկս երկրում բնակչության թվի նվազման՝ ընտրողների թիվն ավելացել է, եւ կոչ արեցին հանրությանն ակտիվ եւ պատասխանատու վերաբերվել առաջիկա գործընթացներին, մարդկանց խնդրեցին օգնել ՀԱԿ-ի աշխատանքներին՝ շտաբներում եւ գրասենյակներում:

ՀՀ առաջին նախագահն իր ելույթում, ըստ էության, հրապարակեց այն ծրագրային դրույթները, որոնցով ՀԱԿ-ը գնալու է առաջիկա ընտրություններին: Լեւոն Տեր-Պետրոսյանի ելույթը կարդացեք՝ http://www.aravot.am/2012/03/30/54264/:

ՀԱԿ հանրահավաքն ավարտվեց երթով: Հաջորդ հանրահավաքի մասին հանրությունը լրացուցիչ կիրազեկվի:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

# «Ժառանգության» հայտարարությանն իրավապահները չեն արձագանքում

## «Լիսկա՞ն» է օրենքից դուրս, թե՞ պատգամավորին հայհոյելն է օրենքի շրջանակներում

«Ժառանգություն» կուսակցությունը երեկ հանդես եկավ հայտարարությամբ, որում մասնավորապես ասվում էր. «Երեկ (մարտի 29-ին- խմբ.) երեկոյան տեղեկացանք, որ Սյունիքի մարզում «Ժառանգության» նախընտրական շտաբի հիմնադրման համար Գորիս մեկնած ՀՀ ԱԺ պատգամավոր Զարուհի Փոստանջյանի եւ «Ժառանգության» Գորիսի ստորաբաժանման ակտիվիստների առջեւ Սյունիքի մարզային իշխանությունները խոչընդոտներ են հարուցել:

Այսպես, Գորիսում քաղաքացիները, ովքեր «Ժառանգության» շտաբի հիմնադրման համար տարածք էին տրամադրել, իշխանական ինչ-ինչ ճնշումներից հետո խնդրել են վերադարձնել իրենց տարածքի բանալիները եւ հանել շտաբի վրա փակցված «Ժառանգության» լոգոնշանը:

Ակնհայտ է, որ բացի իշխանությունների միջամտությունից՝ նշված քաղաքացիները որեւէ այլ պատճառ՝ տարածքի տրամադրումից հրաժարվելու համար, չէին կարող ունենալ: Զարուհի Փոստանջյանը պարզաբանումներ ստանալու նպատակով զանգահարել է Սյունիքի մարզպետ, ՀՀԿ ցուցակի անդամ Սուրեն Խաչատրյանին, որը, սակայն, պարզաբանումների փոխարեն հայհոյախառն արտահայտություններ է արել ԱԺ պատգամավորի հասցեին:

«Ժառանգությունը» խստորեն դատապարտում է Սյունիքի մարզպետի պահվածքը, ինչպես նաեւ ԿԸՀ եւ իրավապահ մարմինների ուշադրությունն է հրավիրում վերը նշված փաստի վրա եւ պահանջում ապահովել բոլոր քաղաքական ուժերի համար նախընտրական մրցակցային հավասար պայմաններ»:

«Առավոտի» հետ զրույցում երեկ «Ժառանգություն» եւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունների միասնական նախընտրական շտաբի պետի տեղակալ Գեւորգ Կալենչյանը հարցին, թե՝ բացի Գորիսում տեղի ունեցած միջադեպից, այլ համայնքներում նման խոչընդոտներ եղե՞լ են, պատասխանեց. «Հենց սկզբից, երբ ուզում էինք նախընտրական շտաբ բացել, մի թեթեւ խոչընդոտ եղավ Երեւանում, բայց դա արագ կանխվեց, եւ դրա մասին էլ չարժե խոսել: Բացի Գորիսում Փոստանջյանի հետ կապված դեպքից՝ ուրիշ որեւէ այլ խնդիր չենք ունեցել եւ հույս ունենք՝ չենք էլ ունենա»:

Գեւորգ Կալենչյանն ասաց նաեւ, թե իրավապահների կողմից «Ժառանգության» այս ահազանգին արձագանքելու վերաբերյալ որեւէ տեղեկություն ինքը չունի:

Մենք ինքներս որոշեցինք գնալ այս ահազանգի հետքերով: ՀՀ ոստիկանությունում մեր հարցադրմանն ի պատասխան՝ ասացին, թե միջադեպը տեղի է ունեցել երկու պաշտոնատար անձանց՝ մարզպետի եւ ԱԺ պատգամավորի միջեւ, ուստի դրանով պետք է զբաղվի ՀՀ հատուկ քննչական ծառայությունը: Ինչ վերաբերում է նախընտրական շտաբ բացելուն խոչընդոտելուն, ապա իրենք դրա վերաբերյալ հայտարարություն չեն ստացել: Գրեթե նույն պատասխանը տվեցին նաեւ ՀՔԾ-ում, որի մամուլի խոսնակն «Առավոտին» փոխանցեց, թե ՀՔԾ-ին այդ առնչությամբ չեն դիմել, հայտարարություն չի ստացվել, եւ այդ առնչությամբ ոչ նյութեր են նախապատրաստվում եւ ոչ էլ, առավել եւս, քրգործ է հարուցվել:

Պատեհ առիթից օգտվելով՝ «Ժառանգության» նախընտրական շտաբի ներկայացուցիչ Կալենչյանից հետաքրքրվեցինք նաեւ, թե քանի՞ նախընտրական շտաբ են նախատեսել ունենալ: «Երեւի ամսի 8-ից Հայաստանի ողջ տարածքում նախընտրական գրասենյակներ կունենանք, այդ թվում՝ մարզերում մոտ 40-ը, նաեւ Երեւանի բոլոր համայնքներում»:

Կալենչյանն ասաց, թե նախընտրական գրասենյակների աշխատանքներում ներգրավվածների թվաքանակի վերաբերյալ վիճակագրություն չունեն, բայց «մեզ մոտ ամեն մի գրասենյակում, որը նաեւ կկատարի շտաբի գործառույթները, կունենանք գոնե մեկ՝ գրասենյակում մշտապես գտնվող գործավար, իսկ մնացածը՝ տեսնենք, կախված է այն բանից, թե ժողովուրդն ինչ մասնակցություն կունենա»: «Ժառանգությունը», նրա ներկայացուցչի ասելով, ինչպես նախորդ ընտրությունների ժամանակ, այս անգամ էլ ապավինելու է նաեւ կամավորներին, քանի որ «մեր կուսակցությունը միշտ աշխատել է հիմնականում կամավորների հետ: Մենք փորձելու ենք մեր ողջ ռեսուրսը՝ կուսակցությունների ու նաեւ հասարակական սեկտորի, առավելագույնս օգտագործել»:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

# Հաշմանդամություն ունեցող երեխային ինչպես հեռացրել էին դպրոցից, այնպես էլ հետ կընդունեն

## Հասարակական կազմակերպությունների պայքարից հետո դպրոցի տնօրենն այլընտրանք չունի

15-ամյա Արտյոմ Սերոբյանը տեղաշարժման խնդիրներ ունի եւ մոտ 4 տարի առաջ դադարել է գնալ Կոտայքի մարզի Արամուս գյուղի միակ դպրոցը: Բանն այն է, որ Արամուսի դպրոցի տնօրեն Սուրեն Զոհրաբյանը աշակերտների դասասենյակը առաջին հարկից տեղափոխել է 3-րդ հարկ՝ հաշվի չառնելով, որ դասարանում հաշմանդամություն ունեցող աշակերտ կա: Արտյոմի ծնողների բազմաթիվ խնդրանքներին՝ դասասենյակը չտեղափոխել բարձր հարկ, որպեսզի երեխան իր դասընկերներից չկտրվի ու կարողանա հաճախել դպրոց, տնօրենը չի ընդառաջել: Արտյոմի մոր՝ Լարիսա Միքայելյանի պատմելով՝ ստիպված երեխային տեղափոխել են Երեւան քաղաքի հատուկ դպրոց. «Արտյոմն այդ հատուկ դպրոցում ավելի ընկճված էր ու ոչ մի կերպ չէր համակերպվում, որ հարազատ դպրոց այլեւս չի կարող այցելել: Շուրջը տարբերաբար հաշմանդամ երեխաներ տեսնելով՝ նա իրեն ավելի վատ էր զգում: Իսկ Արամուսի դպրոցում, շփվելով առողջ երեխաների հետ ու բազմաթիվ ընկերներ ունենալով, Արտյոմն ավելի ինքնավստահ էր ու աշխույժ: Բանը հասավ նրան, որ Արտյոմը հրաժարվեց հատուկ դպրոցում մնալ, մենք ստիպված նրան տանում էինք, հանձնարարությունը ստանում էր ու գալիս՝ տանն էր պատրաստում դասերը: Դրա հետեւանքով նույնիսկ Արտյոմի առաջադիմությունը տուժեց»:

Երեկ, ի պաշտպանություն Արտյոմ Սերոբյանի, մի խումբ հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ այցելել էին Արամուսի դպրոց՝ տնօրենի հետ հանդիպելու: Նրանք պնդում էին, որ խախտվել է հաշմանդամ երեխայի՝ կրթություն ստանալու իրավունքը: Հանդիպմանը ներկա էր նաեւ «Առավոտը»: Հ/Կ-ների ղեկավարները տնօրենին մատնանշելով Արտյոմի իրավունքները՝ երեխային դպրոց վերադարձնելու միջնորդություն արեցին: Սակայն տնօրենն էլ իր հերթին փորձեց արդարացնել Արտյոմին դպրոցից հեռացնելու իր քայլը. «Ես ի՞նչ մեղք ունեմ: Իրենք են իրենց երեխային հանել դպրոցից: Տարան հատուկ դպրոց, տեսան, որ էնտեղ իրենց ավելի ձեռնտու է, հատուկ մասնագետ-ուսուցիչներ կան, ինքն իր համաձայնությամբ է տարել»: Մասնագետ-ուսուցիչ արտահայտությանն անմիջապես արձագանքեց «Հույսի կամուրջ» հ/կ նախագահ Սուսաննա Թադեւոսյանը. «Հայաստանի Հանրապետությունում ուսուցիչ ավարտում են եւ ստանում են մանկավարժի որակավորում: Ի՞նչ ասել է մասնագետ-ուսուցիչ»: Այս հարցին էլ տնօրենը պատասխանեց. «Երեխան առանձնահատուկ պայմանների կարիք է ուզում: Երեխան բնության բերումով այդ վիճակում է, հատուկ մանկավարժ է պետք, որ զբաղվի էդ երեխայով: Դասարանում 25 աշակերտ կա, ուսուցիչը ինչքա՞ն պիտի կարողանար հասցնել»:

Տիկին Թադեւոսյանն էլ փորձեց տնօրենին «լուսավորել» եւ բացատրել, որ ՀՀ-ում հանրակրթական չափորոշիչներ իրականացնելու պատասխանատուն մանկավարժն է, երեխայի ուսուցիչը:

Նկատենք, որ այս հանդիպումից պարզ դարձավ, որ չնայած արդեն մի քանի տարի է՝ ամբողջ հանրապետությունով մեկ ներդրվել է ներառական կրթությունը, եւ բավականին մեծ գումարներ են ծախսվում այդ ուղղությամբ, սակայն շատ մանկավարժներ դեռեւս պատրաստ չեն հաշմանդամություն ունեցող աշակերտի հետ աշխատել: Տնօրենի խոսքերով՝ «Ես էդ երեխայի համար դասատուների հետ 4 տարի թշնամի եմ եղել»: Ճշտող հարցին՝ արդյոք մանկավարժները հրաժարվո՞ւմ էին դասավանդել Արտյոմին, տնօրենը պարզաբանեց, որ կտրականապես չէին հրաժարվում, այլ դժվարությամբ էին աշխատում:

Զրույցի ընթացքում դպրոցի տնօրենը նույնիսկ մի փոքր վրդովմունք արտահայտեց ոլորտի պատասխանատուների հասցեին. «Ասում են՝ ներառական կրթություն, բա թող պայմաններ ստեղծեն, թող զուգարանը հարմարեցնեն ու կարգի բերեն, կամ էլ գումար հատկացնեն՝ մենք անենք»:

«Առավոտը» հանդիպեց նաեւ Արտյոմի նախկին ուսուցչի եւ համադասարանցիների հետ: Մեզ հետ զրույցում նրա ընկերները բավականին դրական արտահայտվեցին Արտյոմի մասին, նույնիսկ կարոտել էին իրենց ընկերոջը: Մեր հարցին, թե Արտյոմը երբեւէ դժվարություն կամ անհանգստություն առաջացրե՞լ է համադասարանցիների համար, նրանք այսպես արձագանքեցին. «Ո՛չ, մենք միշտ էլ լավ շփվել ենք, միշտ իրար հետ խաղացել ենք»: Համադասարանցիներից մեկն էլ խոստովանեց, որ Արտյոմի հետ մտերմություն է անում, որովհետեւ նա շատ բարի է:

Արտյոմի նախկին ուսուցչին էլ ներկայացրինք տնօրենի այն դիտարկումը, որ որոշ մանկավարժներ դժվարությամբ են աշխատել Արտյոմի հետ: Մանկավարժը խոստովանեց, որ ճիշտ է՝ Արտյոմի հետ մի քիչ բարդ է, բայց ինքն անձամբ երբեք չի անտեսել երեխային:

Ի վերջո հասարակական կազմակերպությունները ու դպրոցի տնօրենը եկան համաձայնության՝ ծնողների դիմումը ներկայացնելուց հետո Արտյոմը կվերադառնա իր հայրենի գյուղի հայրենի դպրոցը: Հ/Կ-ների ղեկավարները խոստացան այդ դպրոցի մանկավարժների հետ սեմինարներ անցկացնել՝ կրթել եւ նախապատրաստել, այսպես ասած՝ ներառական ուսուցմանը:

Երբ այցելեցինք Արտյոմին, որպեսզի նրա՝ դպրոց վերադառնալու լուրն ասենք, նա համակարգչային ինչ-որ խաղով էր զբաղված: Շատ ուրախացավ, երբ իմացավ, որ կարող է հաճախել իր ուզած դպրոցը, ու մեզ հետ զրույցում թեեւ վստահեցրեց, որ դեռ չի որոշել՝ ինչ մասնագետ է դառնալու, բայց խոստացավ լավ սովորել:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ



Արտյոմ Սերոբյանը հ/կ-ների պայքարից հետո իր նախկին դպրոցը կայցելի:

### «ԱրմենՏելը» հովանավորում է «Red Bull Paper Wings 2012»-ը

«ԱրմենՏել» ընկերությունը հովանավորում է «Red Bull Paper Wings 2012» առաջնության ազգային փուլը: 2012թ. մարտի 27-ից 29-ը Հայաստանի բուհերի ուսանողները ցուցադրեցին թղթյա ինքնաթիռ պատրաստելու իրենց հմտությունները, լավագույն արդյունքներ ցուցաբերած 45 մասնակից մարտի 31-ին կպայքարի աշխարհի առաջնության եզրափակչում Հայաստանը ներկայացնելու իրավունքի համար:

«Red Bull Paper Wings 2012» համաշխարհային առաջնության շրջանակում թղթյա ինքնաթիռների մրցումների ազգային փուլն անցկացվում է 3 դասերում՝ «թռիչքի հեռավորություն», «թռիչքի տեւողություն» եւ «աերոբատիկա»: Ընտրական փուլերն անցկացվեցին մարտի 27-ին՝ ԵՊՀ-ում, մարտի 28-ին՝ Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանում, եւ մարտի 29-ին՝ Պետական տնտեսագիտական համալսարանում: Յուրաքանչյուր փուլում լավագույն արդյունքներ ցուցաբերած 15 ուսանող անցան ազգային եզրափակիչ եւ մարտի 31-ին կպայքարեն Աշխարհի առաջնության 3 ուղեգրերի համար:

«Red Bull Paper Wings 2012» առաջնությունն անցկացվում է 2006 թվականից ավստրիական Զալցբուրգ քաղաքում՝ յուրաքանչյուր 3 տարին մեկ: Մրցումներին մասնակցում են տարբեր երկրների ուսանողներ:

### Սիլիկյանում եւ մի քանի այլ թաղամասերում ջուր չի լինի

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 31-ին, ժամը 10.00-20.00-ը, կդադարեցվի Սիլիկյան թաղամասի 4-13 փողոցների, Սպանդարյան կայարանի, Հաղթանակ գյուղի 4-22 փողոցների, Մերձավան գյուղի ու հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

# Հոսանքը տատանվել է, տեխնիկան՝ փչացել

## ՀԷՑ ՓԲԸ «Հարավ» մասնաճյուղը բնակիչներին չի փոխհատուցում հոսանքի տատանման պատճառով շարքից դուրս եկած տեխնիկայի համար:

14 հարկանի շենքի վերջին երկու հարկերում մեկ տարվա ընթացքում արդեն երկրորդ անգամ հոսանքի տատանման պատճառով բնակիչների կենցաղային էլեկտրական սարքավորումները շարքից դուրս են գալիս: Էլեկտրական ցանցերի տեղամասային բաժանմունքը հրաժարվում է ընդունել իր մեղքը եւ չի արձանագրում, որ տեղի է ունեցել հոսանքի տատանում: Ավելին՝ իրենց կարճ խելքով փորձում են յուրաքանչյուր բնակարանի բնակչի համոզել, որ հենց տվյալ բնակարանում առանձին-առանձին եւ նույն պահին է եղել խափանման պատճառը:

2011-ի մարտին տեղի ունեցած դեպքից հետո բնակիչներն իրենց միջոցներով վերանորոգեցին իրենց տան սարքավորումները, ցուրտ եղանակին ստիպված լինելով ջեռուցման հարցն արագ լուծել՝ քաջ գիտակցելով, որ կատարվածն ընկերության աշխատակիցների թերացման արդյունք էր: Բանն այն է, որ ՓԲԸ «Հարավ» մասնաճյուղը բնակչի դիմումը քննում էր միայն այն դեպքում, երբ տեղամասից տեղեկանք էին տալիս, որ տեղի է ունեցել հոսանքի տատանում: Տեղամասը, բնականաբար, նման տեղեկանք չէր տալիս եւ օղակը փակվում էր:

Այս տարի նույն ամսի 23-ին, գիշերը ժամը 2-ին, տեղի է ունեցել նույն վթարը: Բնակիչներն այս դեպքում որոշել են գնալ մինչեւ վերջ եւ սկզբի համար կրկին դիմել են «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հարավ» մասնաճյուղ: Այստեղ ընդունելով համապատասխան դիմումը՝ ասել են, որ կարգը փոխվել է, եւ իրենց աշխատակիցները երկու օրվա ընթացքում կպատասխանեն բնակիչներին: Քաղաքացու ներկայացրած դիմումից երեւում էր, որ շարքից դուրս է եկել ջեռուցման լոկալ համակարգը, եւ բավականին ցուրտ եղանակը հաշվի առնելով՝ ընկերության աշխատակիցները պետք է գոնե սահմանված ժամկետում պատասխանեին: Բայց 4 աշխատանքային օրերից հետո էլ մասնաճյուղի աշխատակիցները չեն կատարել իրենց պարտականությունը, իսկ ՀԷՑ ՓԲԸ «Հարավ» մասնաճյուղի հեռախոսահամարին եւ պետի ընդունարանի հեռախոսահամարին արվող զանգերին օրերով չեն պատասխանում: Նամակագրիս ամուսինը ստիպված է եղել իր աշխատանքային ժամի հաշվին նորից այցելել ՀԷՑ ՓԲԸ «Հարավ» մասնաճյուղ, որտեղ կրկին ստացել է նույն մերժողական պատասխանը, թե տեղամասում հոսանքի տատանում չեն արձանագրել: Համաձայն բնակչի հետ կնքած պայմանագրի՝ բնակարանից դուրս գտնվող էլեկտրական սարքավորումների անխափան աշխատանքի պատասխանատուները էլցանցերի մասնագետներն են, բայց նրանց անպատասխանատու աշխատանքի արդյունքում բնակչությանը վնաս պատճառելը տարիներով անպատիժ է մնում: Իսկ հարցը, թե ով պետք է հետեւի բնակչության սպասարկման հետ առնչվող այս ընկերության աշխատանքներին, մնում է բաց:

ԼԻԱՆԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Էրեբունի 21, բն. 47-ի բնակիչ

Բնակչի բողոքի առնչությամբ «Հայէլցանցերից» «Առավոտին» հայտնեցին, որ նշյալ օրը նշյալ ժամին իրենց մոտ ոչ մի տատանում չի արձանագրվել:

Առավոտ
aravot daily
ՇԱԲԱԹ 31.03.2012

# Մի բիծ մաքրելու ակնկալիքով



Արցախյան պատերազմի մասնակից Վահան Հարությունյանի հայրը՝ Ռազմիկ Հարությունյանը, ծնված օրից՝ 1951 թվականից բնակվել է Անտառային փողոցի թիվ 118/2 տանը, հիմնել այգի: 1998թ. Ռ. Հարությունյանը դիմել է համապատասխան մարմիններին՝ տունը եւ այգին սեփականացնելու պահանջով, կազմվել է տան եւ այգու հատակագիծը, սակայն դրանից հետո սեփականաշնորհման գործընթացը կասեցվել է: 2003-ին կրկին դիմել է անշարժ գույքի կադաստրի Կենտրոն ստորաբաժանմանը եւ կրկին մերժում ստացել՝ «քանի որ մինչեւ 2001թ. մայիսի 15-ը հաշվառված չի եղել, գործին ընթացք տալ չեն կարող» պատճառաբանությամբ: Իսկ 2006 թվականին ԴԱՀԿ ծառայությունից Հարությունյանները տեղեկացել են, որ իրենց 25 տարվա այգին Արայիկ Ստեփանյանի սեփականությունն է:

2006-ից մինչ օրս Հարությունյանները անցել են բոլոր ատյանների դատարաններով, դիմել արդարադատության բոլոր մարմիններին, ՀՀ նախագահին, սակայն հարցը լուծում չի ստացել: Ի դեպ, 2010թ. Ռազմիկ Հարությունյանը մահացել է, եւ հոր մահվան պատճառն էլ Վահան Հարությունյանը համարում է «4 տարվա կեղծ դատավարությունները, անօրեն դատարաններն ու սրիկա Արայիկ Ստեփանյանին»:

Վահան Հարությունյանը որպես կողմ մասնակցել է բոլոր դատավարություններին եւ դատարաններում եղած գործերը ուսումնասիրելով՝ հայտնաբերել Ա. Ստեփանյանին շպատկանող իրենց այգու եւ գործող ընդհանուր օգտագործման ճանապարհը սեփականացնելու համար հիմք ծառայած բոլոր կեղծ փաստաթղթերը, որոնցից առաջնայինը, որով հիմք է դրվել կեղծարարությանը, Կենտրոնի թաղապետարանի թիվ 23/35-110/440 կեղծ տեղեկանքն է (տրված՝ 14.01. 2003թ.): Ըստ այդ տեղեկանքի, Երեւանի Անտառային փողոցի թիվ 126 հասցեում գտնվող 1500 քմ մակերեսով հողամասը իբր Արայիկ Ստեփանյանը օգտագործել է տասը եւ ավելի տարիներ, իսկ այդ կեղծ տեղեկանքի հիման վրա էլ քաղաքապետարանն իր թիվ 400Ա որոշմամբ այդ հողատարածքը հատկացրել է Ա. Ստեփանյանին:

Իրականում Ա. Ստեփանյանը այդ հողատարածքի հետ ոչ մի կապ չի ունեցել: Այս հողամասից վիճելի 250 քմ-ն Ռազմիկ Հարությունյանի ընտանիքը դեռ 1986-ից վերածել էր այգու եւ մինչ օրս բարեխիղճ, բացահայտ եւ անընդմեջ օգտագործում է այն: Այս հանգամանքը հիմնավորվել է և՛ գործի նյութերով, և՛ Արայիկ Ստեփանյանի ցուցմունքներով:

Երեւանի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների ընդհանուր իրավասության դատարանի որոշման համաձայն՝ քրեական գործի նախաքննությամբ բազմաթիվ ապացույցներ են ձեռք բերվել այն մասին, որ 1500քմ հողատարածքը, այդ թվում Ռազմիկ Հարությունյանի կողմից օգտագործվող 250 քմ տարածքը 2003թ. դրությամբ Ա. Ստեփանյանի կողմից տասը եւ ավելի տարի օգտագործվել չէր կարող: Այդ փաստը հաստատվել էր Կենտրոն թաղապետարանի թիվ 18 տեղամասի լիազոր ներկայացուցչի 2007թ. թիվ 60 տեղեկանքով, հողամասի հարեւանությամբ բնակվող տասը անձանց կողմից ստորագրված հայտարարագրով, ՀՀ քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2007թ. թիվ 07-1601 վճռով: Ա. Ստեփանյանն էլ իր բացատրություններում եւ ցուցմունքներում հայտնել էր, որ տվյալ հասցեում առաջին անգամ 500 քմ հողամաս է ձեռք բերել 1995-ին, իսկ դրան կից հողամասը ձեռք բերելու համար դիմել է 2003-ին, ինչպես նաեւ հավաստել, որ Ռազմիկ Հարությունյանի կողմից օգտագործվող, ծառապատված տարածքը դուրս է իր կողմից գնված 1500 քմ հողամասից:

Դատարանի որոշմամբ հաստատվել է, որ Կենտրոն թաղապետարանի տեղեկանքը կեղծ է, դատարանը վերացրել է քննիչի որոշումը, հետ ուղարկել նույն ստորաբաժանում, իսկ ոստիկանության Կենտրոնի բաժնում, հաշվի չառնելով դատարանի որոշումը, կայացնում են իրենց հարմար որոշում: Տարօրինակ է, բայց քննիչը գտել է, որ դատարանը սխալ է, իսկ հաջորդ դատարանը քննիչի որոշումը հիմնավորված է համարել: Եվ սրանք այս գործում միակ անօրինականությունները չեն:

Ոստիկանություն-դատարաններ երկար քաշքշուկից հետո Վահան Հարությունյանը դիմել է ՀՀ նախագահին, սակայն դրանք ուղարկվել են արդարադատության նախարարություն, որտեղից պատասխանել են, թե իրենք իրավասություն չունեն խնդրին լուծում տալու: Վահան Հարությունյանը, բնականաբար, հարց է բարձրացնում, թե ինչո՞ւ են իր դիմումները նախագահականից վերահասցեագրվում ԱՆ, եթե վերջինս իրավասու չէ զբաղվել այդ հարցով, մի՞թե նախագահի աշխատակազմում չգիտեն դրա մասին:

Վահան Հարությունյանը դիմել է Եվրադատարան, ինչպես ինքն է ասում՝ «հույսով՝ այնտեղ գտնել արդարություն», սակայն մեծարգո նախագահից խնդրում է պատասխանել միայն մեկ հարցի՝ «արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը ի վիճակի չէ գոնե մի բիծ մաքրել Եվրոպայի աչքերից»:

Ա. ԳԱՐԵԳԻՆՅԱՆ

## Հանդիպում՝ ՀՀ հատուկ քննչական ծառայությունում

ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ Անդրանիկ Միրզոյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ դեսպանատան անդրազգային հանցավորության հարցերով պատասխանատու Դենիել Հեսթինգսի եւ ԵԱՀԿ երեւանյան գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հովսթրայի գլխավորած պատվիրակությանը: Հանդիպման ժամանակ քննարկվել են ընտրական գործընթացների վերաբերյալ ՀՔԾ-ին վերապահված հանցագործությունների քննության հետ կապված մի շարք հարցեր:

Ա. Միրզոյանը տեղեկացրել է, որ ընտրական գործընթացների հետ կապված՝ գործող Քրեական օրենսգրքում նախատեսված է 12 հանցակազմ, որոնցից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով ՀՔԾ-ի ենթակայությանը վերապահվել է 4-ը: Մասնավորապես՝ ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը, ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը, կեղծ ընտրական քվեաթերթիկներ կամ քվեարկության ծրարներ պատրաստելը, ընտրողի կամքի ազատ իրականացմանը խոչընդոտելը: Հյուրերի խնդրանքով Ա. Միրզոյանը հանդիպման ընթացքում անդրադարձել է ընտրակաշառքի դեպքերին, ընտրական գործընթացների վերաբերյալ հաղորդումների քննարկման կարգին, քրեական գործ հարուցելու առիթների եւ հիմքերի վերաբերյալ հարցերին:

«ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների մոտ ձեւավորվել է ընտրական գործընթացների վերաբերյալ նյութերի նախապատրաստման եւ քրեական գործերի քննության բավականին հարուստ փորձ եւ մեթոդիկա»,- նշել է Ա. Միրզոյանը՝ վստահեցնելով, որ ՀՔԾ-ն ունի կամք եւ վճռականություն՝ իր լիազորությունների շրջանակներում պաշտպանելու քաղաքացիների ընտրական իրավունքը եւ ընտրախախտում թույլ տված անձանց գործողություններին համարժեք քրեաիրավական գնահատական տալու: Կարեւորելով հանրային իրազեկումը՝ շեշտվել է նաեւ, որ Հատուկ քննչական ծառայությունը թույլատրելի սահմաններում պատրաստակամ է ապահովելու հրապարակայնությունը:

ՀՔԾ պետն իր պատրաստակամությունն է հայտնել պետական եւ ոչ պետական մարմինների, հասարակական կազմակերպությունների եւ ԶԼՄ-ների հետ համագործակցության հարցում՝ ընտրությունների բնականոն անցկացման գործընթացն ապահովելու համար:

## Ազատամուտում կռվել են քարով, փայտով, երկաթե օղակներով, անկոթ բահերով

Մարտի 25-ին Տավուշի մարզի Ազատամուտ գյուղի (նախկինում՝ քաղաքատիպ ավան) Հակոբյան փողոցում կռիվ է եղել: Դրա մասնակիցները զինված են եղել քարերով, փայտով, երկաթե օղակներով, անկոթ բահերով: Ոստիկանության Տավուշի քննչական բաժնից տեղեկացանք, որ հարուցվել է քրեական գործ՝ 258 հոդվածի 4-րդ մասի (խուլիգանություն) հատկանիշներով: Մարտի 26-ին ձերբակալվել է Ազատամուտի գյուղապետ Ժորա Մարտիրոսյանի որդին՝ Ռոբերտը: 35-ամյա ամուսնացած երիտասարդը նախկինում դատվել է, սակայն նրա դատվածությունը մարվել է: Ձերբակալությունից երեք օր անց նա կալանավորվել է: Քրեական գործ է հարուցված նաեւ նրա 2 եղբայրների նկատմամբ, սակայն նրանք ազատության մեջ են: Որոշ լուրերի համաձայն՝ կռվի պատճառը այն է, որ ազատամուտցի մի երիտասարդ, որը նախկինում եղել է գյուղապետարանի աշխատակազմի ղեկավար, որոշել է աշնանը կայանալիք համայնքապետի ընտրություններում առաջադրել իր թեկնածությունը, ինչն էլ հարուցել է գյուղապետի որդիների բուռն զայրույթը: Նշենք, որ Ժորա Մարտիրոսյանը ԲՀԿ անդամ էր, անցյալ տարի անդամագրվեց ՀՀԿ-ին:

ՌՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

# Բրունո Դյութուա. «MegaFon»-ի հետ միասին մենք հեղափոխություն ենք անում ռոմինգում»

## Երկու ընկերությունները մեկնարկում են ռազմավարական համագործակցություն

Այսօր Orange Արմենիան՝ Ֆրանս Տելեկոմի հայաստանյան մասնաճյուղը եւ «MegaFon»-ը՝ շարժական կապի ռուսաստանյան ամենամեծ օպերատորներից մեկը, հայտարարեցին ռազմավարական համագործակցության մեկնարկի մասին: Այս նոր համագործակցության շնորհիվ Orange Արմենիայի բաժանորդները, գտնվելով Ռուսաստանում, կօգտվեն ռոմինգի համար նախկինում երբեւէ չառաջարկված բացառիկ սակագներից: Մասնավորապես, միանալով «MegaFon»-ի ցանցին՝ Orange Արմենիայի բաժանորդները կզանգեն Orange-ի եւ «MegaFon»-ի բաժանորդներին եւ զանգեր կստանան նրանցից 30 դրամ/րոպե ֆանտաստիկ սակագնով:




«Orange-ը հզոր միջազգային ընկերություն է, եւ մենք հետեւողական ենք մեր բաժանորդներին առաջարկել լավագույն պայմանները ոչ միայն Հայաստանում, այլ նաեւ ռոմինգի համար, հատկապես այն երկրներում, ուր նրանք հաճախ են լինում: Ռուսաստանը հայաստանցիների կողմից ամենաշատ այցելվող երկրների ցանկում է, եւ մենք երջանիկ ենք այսօր առաջարկել ռոմինգի մի սակագին, որն անգամ ավելի ցածր է, քան Հայաստանում ցանցից դուրս զանգերի միջին սակագինը: Բազմաթիվ հայաստանցիներ, գնալով Ռուսաստան, ձեռք են բերում տեղական օպերատորներից որեւէ մեկի SIM քարտը, որը սովորաբար շատ կարճ կյանք է ունենում: Այսուհետ մեր բաժանորդները դրա կարիքը չեն ունենա եւ Ռուսաստանում իրենց Orange համարով կզգան համարյա ինչպես տանը: Սրանով «MegaFon»-ի հետ միասին մենք հեղափոխություն ենք անում ռոմինգում»,- ասաց Orange Արմենիայի գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան:

Իսկ «MegaFon»-ի ֆեդերալ եւ միջազգային կորպորատիվ վաճառքների գծով փոխտնօրեն Կոնստանտին Սոլոդուխինի խոսքերով՝ «Օպերատորների ռոմինգային քաղաքականության հաջողության հիմնական գործոնը արտասահմանյան գործընկերների հետ արդյունավետ գործընկերային հարաբերություններն են, որոնք մեզ թույլ կտան բաժանորդներին առաջարկել ցածր սակագներ արտերկրում շարժական հեռախոսակապից օգտվելու համար: Ուրախ եմ նշել այս հերթական ձեռքբերումը՝ Orange Արմենիայի հետ շահավետ համագործակցության սկիզբը»:

«MegaFon»-ի ցանցում Orange Արմենիայի բաժանորդներն ունենալու են այլ առավելություններ եւս. այլ մուտքային զանգերի եւ տեղական այլ օպերատորների բաժանորդներին ուղղված ելքային զանգերի մեկ րոպեի արժեքը կլինի 60 դրամ, իսկ դեպի Հայաստանի այլ ցանցերի բաժանորդներին կատարված զանգերինը՝ 120 դրամ:

Orange Արմենիայի բաժանորդները նաեւ կունենան բացառիկ սակագին ռոմինգում GPRS-ից օգտվելու համար՝ ընդամենը 90 դրամ/ՄԲ:

Ռոմինգի բացառիկ սակագները գործելու են ապրիլի 1-ից մինչեւ հունիսի 30-ը:

R

# 13-ը հաջողակ թիվ է երիտասարդ դաշնակահարի համար

Երեկ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դահլիճում կայացավ մարտի 26-ին մեկնարկած Հեղինե Տեր-Ղեւոնդյանի անվան երիտասարդ կոնցերտմայստերների III հանրապետական մրցույթի գալա համերգն ու մրցանակաբաշխությունը:

Մինչ մրցանակների հանձնումը, կոնսերվատորիայի ռեկտոր, պրոֆեսոր Շահեն Շահինյանն «Առավոտին» տեղեկացրեց, թե 1970-ականներին կոնսերվատորիայում Հեղինե Տեր-Ղեւոնդյանի ջանքերի շնորհիվ հիմնադրված կոնցերտմայստերական ամբիոնի դասախոսներն ու ուսանողները մշտապես հանդես են գալիս կատարողական բարձր մակարդակով, հավելելով. «Վստահորեն կարող ենք ասել, որ այս մրցույթը լավ սկիզբ է երիտասարդ երաժիշտների ստեղծագործական առաջընթացի համար: Նույնիսկ համոզված եմ, թե նրանք ժամանակին կդառնան սպասված՝ աշխարհի լավագույն համերգասրահներում»:

Գրան պրին շահեց կոնսերվատորիայի ուսանող Արտյոմ Աբրահամյանը (դոցենտ Աննա Մանդալյանի դասարան), երկրորդ տեղը գրավեց Մենուհի Հովսեփյանը (դոցենտ Լիանա Գասպարյանի դասարան), իսկ երրորդ մրցանակը ժյուրին շնորհեց Հռիփսիմե Աղաբաբյանին (պրոֆեսոր Սեդրա Գյուլբուդաղյանի դասարան): Առաջին մրցանակ որեւէ մեկին չտրվեց:



Մրցութային օրերին հանդիսատեսը, այդ թվում՝ նաեւ ժյուրին, ունկնդիրը եղան Հայաստանում ընդհանրապես կամ հազվադեպ հնչող ստեղծագործությունների: Օրինակ՝ առաջին մրցանակակիր Արտյոմ Աբրահամյանը երգչուհի, միջազգային մրցույթների դափնեկիր Սիրանույշ Գասպարյանի հետ կատարեցին Ռիխարդ Շտրաուսի «Սալոմե» օպերայի ավարտի պատկերը: Երաժշտասեր հանրությունը այս գործի ունկնդիրը կարող է դառնալ միայն CD-ների եւ youtube-ի միջոցով: Արտյոմը Ֆիլհարմոնիկ նվագախմբի ջութակահար Անի Ղազարյանի հետ մատուցեց նաեւ մեզանում հազվադեպ կատարվող Շիմանովսկու «Միֆերը»:

«Առավոտի» ռեպլիկին՝ փաստորեն 13 թիվը հաջողակ է իր համար (դաշնակահարը վիճակահանությամբ հանել էր 13 թիվը), Արտյոմը կատակեց՝ ասելով, թե իր բնակարանի համարն էլ է 13: Հարցին էլ, թե հաղթանակից հետո, ուսմանը զուգահեռ, կմասնակցի՞ այլ մրցույթների ու միջոցառումների, մեր զրուցակիցը հակիրճ պատասխանեց. «Կմասնակցեմ մրցույթների, եթե հնարավոր լինի՝ արտերկրում վարպետության դասերի»:

Նշենք, որ Արտյոմ Աբրահամյանը սովորում է Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի պրոֆեսոր Վիլի Սարգսյանի մասնագիտական դասարանում: Երիտասարդ դաշնակահարը անցյալ տարի Գյումրիում անցկացված «Վերածնունդ» միջազգային երրորդ մրցույթ-փառատոնում արժանացել է 2-րդ մրցանակի:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Ռախմանինովյան օր՝ Ազգային օպերային թատրոնում

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում մարտի 29-ին կարծես հայտարարված էր ռախմանինովյան օր. մեկ երեկոյի ընթացքում թատրոնի գլխավոր դիրիժոր Կարեն Դուրգարյանի ղեկավարությամբ դաշնակահարուհի Արուս Աճեմյանը նվագախմբի ընկերակցությամբ հնչեցրեց Ռախմանինովի 2-րդ դաշնամուրային կոնցերտը եւ ներկայացվեց ռուս անվանի կոմպոզիտորի «Ալեկո» մեկ գործողությամբ օպերան: Գլխավոր՝ Ալեկոյի դերերգով փայլեց ՀՀ վաստակավոր արտիստ Գեւորգ Հակոբյանը: Զեմֆիրայի, Ծեր գնչուի, Երիտասարդ գնչուի, Ծեր գնչուհու կերպարները իրենց պատշաճ մեկնաբանությունը ստացան Մարինե Դեինյանի, Միքայել Հովակիմյանի, Պերճ Քարազյանի, Լիլիթ Գրիգորյանի վարպետության շնորհիվ: Օպերայի ավարտին էլ ծափողջույններից պարզ դարձավ, որ հանդիսատեսը կարոտել էր շուրջ 2 տարի բացակայած այս ներկայացմանը: Ազգային օպերային թատրոնում Ռախմանինովի «Ալեկո» օպերայի պրեմիերային «Առավոտն» անդրադարձել է դեռեւս 2005-ին: Այն Հայաստանում բեմադրել է Սանկտ Պետերբուրգի Մարիինյան թատրոնի ռեժիսոր Իոսիֆ Գաբիտովը:

Վերջին շրջանում օպերային թատրոնի նվագախումբը, բացի իր հիմնական առաքելությունից, հաճախ է անդրադառնում համաշխարհային դասական երաժշտության գոհարներին: Մի առիթով Կարեն Դուրգարյանն «Առավոտին» ասել էր, որ իր նպատակն է նվագախումբը փոսից բեմահարթակ հանելը, ինչի շնորհիվ հանդիսատեսը դեմքով կճանաչի երաժիշտներին եւ, իհարկե, կպահովվի անմիջական կապ նրանց միջեւ:



Գեւորգ Հակոբյանը՝ Ալեկոյի կերպարում:



Արուս Աճեմյանն ու Կարեն Դուրգարյանը:

Ինչ վերաբերում է Ռախմանինովի դաշնամուրային կոնցերտներին, որոնք մասնագետները բնութագրում են «տղամարդկային», հիանալի ներկայացրեց հմայիչ դաշնակահարուհի Արուս Աճեմյանը, ով շուտով մայրանալու է:

«Առավոտը» կատակով նկատեց, թե սպասվող երեխայի մասնագիտական ճակատագիրն արդեն հայտնի է եւ Արուս Աճեմյանից հետաքրքրվեց, թե մինչ երեխայի ծնվելը ինչպե՞ս է իրեն «զրկելու» իր համար սովորական դարձած լավագույն նվագախմբերի հետ համագործակցելու հաճույքից: «Նույնիսկ չծնված երեխային անհրաժեշտ է դասական երաժշտություն ունկնդրել: Պատրաստվում եմ օրերս հանդես գալ նաեւ Ֆիլհարմոնիկ նվագախմբի հետ, այս անգամ Ռախմանինովի 3-րդ կոնցերտի կատարմամբ: Ինչ վերաբերում է երեխայի մասնագիտական կողմնորոշմանը, այդ հարցում ես ու ամուսինս չենք խառնվի»,- ասաց դաշնակահարուհին:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# Մագիստրատուրան չպետք է արժեզրկվի

Բոլոնյան գործընթացին անդամագրվելուց հետո մեր հանրապետությունում արձանագրվեց մագիստրոսական կրթության «բում»: Դրան նպաստեցին մի շարք գործոններ: Նախ՝ ազգաբնակչության շրջանում ամրագրվեց այն թույր կարծիքը, թե իբր բակալավրիատը «թերի բարձրագույն է» եւ պետք է ուսումն անպայման շարունակել մագիստրատուրայում: Իրենց հերթին, զորակոչային տարիքի տղաները շարունակեցին «պատսպարվել» մագիստրատուրայի տանիքի տակ: Բուհերն էլ, օգտվելով ստեղծված իրավիճակից, սկսեցին համատարած մագիստրոսական կրթական ծրագրեր մատուցել, դրանով բարելավելով իրենց ֆինանսական վիճակը, սակայն ոչ միշտ հաշվի առնելով մագիստրոսական կրթության նրբերանգները:

Ակադեմիական այս «իրարանցումը» ինչոր չափով նպաստեց մագիստրոսական կրթության արժեզրկմանը, որը պարզորոշ երեւում է ներկայումս իրականացվող սոցիոլոգիական հարցումներից (www.edu.am): Ստացվում է այնպես, որ համալսարանները մատուցելով մագիստրոսական կրթություն, հաճախ կրկնում են բակալավրիատի ծրագրերը, հաշվի չեն առնում գործատուի պահանջները մագիստրոս շրջանավարտի նկատմամբ: Իր հերթին, գործատուն նույնպես ըստ պատշաճի չի արժեւորում մագիստրոսին (բարձր աշխատավարձի, կառավարչական պաշտոնների առաջարկներ եւ այլն): Այս առումով կուզենայի եւս մեկ անգամ ներկայացնել մագիստրոսական կրթության առանձնահատկությունները, որպեսզի մագիստրատուրան արժանվույնս գնահատվեր թե ակադեմիական, թե գործնական ոլորտում:

Մագիստրատուրան բարձրագույն մասնագիտական կրթության երկրորդ աստիճանն է: Այն չի կարող կրկնել բակալավրիատի ուսումնական պլանը, քանի որ, ի տարբերություն վերջինիս, լրիվ այլ նպատակ է հետապնդում: Եթե բակալավրիատի շրջանավարտը գիտի, թե իր մասնագիտության գծով ինչպես պետք է աշխատել, ապա մագիստրոսը պետք է պատրաստ լինի, թե իր մասնագիտության գծով ինչպես պետք է աշխատել, կառավարել եւ ստեղծագործել: Բակալավրը ստանում է պրոֆեսիոնալ հմտություններ՝ որեւէ մասնագիտության (լինի այն «նեղ», թե ընդհանուր) գծով գործնական առօրյա աշխատանքային խնդիրներ լուծելու համար: Ի լրացումն դրա, մագիստրոսը, ստանալով հավելյալ կրթություն, գործնականում պրոֆեսիոնալ մասնագետի «ավանդական» պարտականություններից ավելին է կատարում, մասնավորապես՝ լրացուցիչ լուծելով իր մասնագիտությանն առնչվող կառավարչական, գիտահետազոտական եւ, ինչու չէ, նաեւ կրթական խնդիրներ: Մագիստրոսի աշխատանքային պարտականությունների մեջ, բակալավրի գործնական հմտություններից բացի, ներառվում են կառավարչական գործառույթներ, ինչպես նաեւ գիտամանկավարժական գործունեություն: Մագիստրոսներին իրավունք է վերապահվում դասավանդելու կադրերի վերապատրաստման ծրագրերում, մասնագիտացված քոլեջներում, բուհերում: Գործնականում մագիստրոսներից նորամուծությունների, գիտական բնույթի հետազոտական արդյունքների սպասելիքներ կան, որոնց գծով իրենց գործնական աշխատանքում բակալավրիատի շրջանավարտները պարտավորություն չունեն: Ուստի գործատուն բարձրագույն կրթությամբ շրջանավարտից մասնագիտական գիտելիքներից բացի, կարող է պահանջել նաեւ լրացուցիչ այնպիսի հմտություններ, ինչպիսիք են գիտական հետազոտությունը, մանկավարժությունը, ղեկավարությունը, մասնագիտության արդյունավետ կառավարումը, որոնք նախատեսված չեն բակալավրիատի ուսումնական ծրագրերում եւ առնչվում են մագիստրոսի աշխատանքային գործունեությանը:

Բարձրագույն կրթությունը թանկ հաճույք է եւ կարճաժամկետ բնույթ չի կրում: Ուստի կրթական ծառայություն մատուցող հաստատությունը պարզապես պարտավոր է շրջանավարտին մատուցել մասնագիտական հմտություններ, որը պահանջում է աշխատանքի շուկան: Եթե հետագայում կրթական ստորին աստիճանի շրջանավարտն իր աշխատանքային գործունեության ընթացքում ցանկանում է ձեռք բերել լրացուցիչ հմտություններ (կառավարչական, գիտահետազոտական, մանկավարժական), ապա պետք է շարունակի իր ուսումը բարձրագույն կրթության երկրորդ, այնուհետեւ երրորդ մակարդակներում: Ստացվում է այնպես, որ բարձրագույն կրթության աստիճանային համակարգը առավել ճկուն է եւ խնայում է ուսանողների թե ժամանակը, թե ֆինանսական միջոցները: Ուստի, մագիստրոսական կրթական ծառայությունների մատուցումը չպետք է արժեզրկել, այլ, ընդհակառակը, ըստ պատշաճի ծառայեցնել թե գործատուի, թե ուսանողի շահերին:

ԱՐՄԵՆ ՃՈՒՂՈՒՐՅԱՆ
տնտեսագիտության դոկտոր,
պրոֆեսոր

Առավոտ aravot daily
ՇԱԲԱԹ 31.03.2012

VivaCell MTS

## ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

# Մամեդյարովն ու Սաֆարլին ո՞ւմ վրա են «մուննաթ» գալիս շախմատի Եվրոպայի առաջնությունում

Ադրբեջանցի գրոսմայստերներ Շախրիյար Մամեդյարովը եւ Էլթայ Սաֆարլին Պլովդիվում ընթացող շախմատի Եվրոպայի առաջնության 9-րդ տուրից հետո հրաժարվել են շարունակել պայքարը:

Հետաքրքիրն այն է, որ երկուսն էլ խախտելով Եվրոպայի շախմատային միության ընդունած որոշումը՝ մեղքն ըստ երեւույթին ուզում են բարդել մրցավարության եւ որ ավելի հավանական է՝ կազմակերպիչների վրա:

Ըստ ԵՇՄ որոշման, Եվրոպայի առաջնությունում արգելվում է մինչեւ 40-րդ քայլը ոչ-ոքի անել, եթե պարտիայի տրամաբանական ընթացքը դա չի պատճառաբանում: Եվ եթե անգամ դա այդպես է, կողմերը պարտադիր պետք է դիմեն մրցավարներին եւ ստանան նրանց թույլտվությունը: Սակայն Մամեդյարովը՝ իսպանացի Ալվար Ռոզել Ալոնսոյի, իսկ Սաֆարլին՝ խորվաթ Տալ Բարոնի հետ, համապատասխանաբար, 19-րդ եւ 14-րդ քայլում միավորը բաժանելու համաձայնության եկել են ինքնագլուխ,



Ադրբեջանցիները վիճում են:

ինչի համար մրցավարները, օրենքի տառին համապատասխան, զույգերին երկկողմ պարտություն են գրանցել: Դրանից հետո, ի նշան անհամաձայնության, ադրբեջանցիները հրաժարվել են շարունակել պայքարը Եվրոպայի առաջնությունում:

Հարեւան երկրի շախմատիստներին, ամենայն հավանականությամբ, դուր չի եկել այն, որ նույն օրը մեր Վլադիմիր Հակոբյանը նույնպես արագ է ավարտել պարտիան՝ 16-րդ քայլում խաղաղասիրաբար սեղմելով ռուսաստանցի Վլադիմիր Մալախովի ձեռքը: Սակայն հայ գրոսմայստերն ու մրցակիցը դա արել են պահանջված կարգով: Նրանք խաղատախտակի վրա երեք անգամ կրկնել են դիրքը, որից հետո հրավիրել են մրցավարին: Վերջինս էլ՝ համոզվելով, որ դա կանխամտածված չի արվել (հակառակ դեպքում իրավունք ունեին պահանջել պարտիան շարունակել) եւ ստացված դիրքի տրամաբանությանը չի հակասում, վավերացրել է արդյունքը:

Հիշեցնենք, որ նախորդ տուրում էլ Շախրիյար Մամեդյարովին պարտություն էր գրանցվել կանոնակարգի մեկ այլ խախտման՝ պարտիայի մեկնարկից ուշանալու համար: Ու թեեւ նա պնդում էր, թե ուշացել է ընդամենը 10 վայրկյան, սակայն իրականում իր խաղատախտակին մոտեցել էր ժամացույցը գործի դրվելուց մոտ 1,5 րոպե հետո: Եվ մի բան էլ. շախմատային կանոնները գործում են խիստ եւ ոչ ոքի համար բացառություն չի արվում: Ինչպես, օրինակ, Չինաստանում անցկացված շախմատի կանանց աշխարհի առաջնությունում ռուս շախմատիստուհուն պարտություն գրանցվել է ընդամենը երեք վայրկյան ուշանալու համար:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

## Մոուրինյոն ու Կասիլյասն ընդհարվել են

Իսպանական AS գործակալության փոխանցմամբ, նրանց միջեւ հակասությունը առաջացել է «Մալագայի» եւ «Վիլյառեալի» հետ հանդիպումներից հետո, որոնց հետ «Ռեալը» ոչ-ոքի՝ 1:1 է խաղացել: Արքայական ակումբի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոյի կարծիքով՝ թիմն այդ գոլերը բաց է թողել հենց 30-ամյա Իկեր Կասիլյասի մեղքով: Պորտուգալացին դիմել է ակումբի ղեկավարությանը՝ նոր դարպասապահ ձեռք բերելու առաջարկով, որպեսզի այդ դիրքում մրցակցությունն ուժեղանա:

## Անդրեյ Արշավինը վթարի է ենթարկվել



Ֆուտբոլի Ռուսաստանի ազգային հավաքականի եւ Սանկտ Պետերբուրգի «Զենիթի» հարձակվող Անդրեյ Արշավինը ավտովթարի է ենթարկվել:

«Fonatka.ru»-ի փոխանցմամբ, միջադեպը տեղի է ունեցել երեկ երեկոյան՝ Ռուսաստանի հյուսիսային մայրաքաղաքի Էնգելսի պողոտայում:

Կատարվածի մանրամասների մասին առայժմ ոչինչ չի ասվում: Սակայն հայտնի է, որ նա «Զենիթի» հետ եղել է ուսումնամարզական հավաքում: Ֆուտբոլիստը չի տուժել, իսկ ահա նրա ավտոմեքենան վնասվել է՝ ստանալով թեթեւ քերծվածքներ:

Ա. Հ.

ԱՆԴՐԱԴԱՐՁ

## ՕԵԿ եւ ԲՀԿ անդամները չկարողացան մեկ օրինակ բերել

Խորհրդարանական ընտրություններին մասնակցող քաղաքական կուսակցությունների մեծ մասն արդեն ներկայացրել է իր քաղաքական ծրագրերը: Այդ ծրագրերում, ինչպես ամեն տարի, թեեւ ոչ ծավալուն, բայց անդրադարձ կա նաեւ գիտության ոլորտում գոյություն ունեցող խնդիրների վերաբերյալ լուծումների ճանապարհներին: Քաղաքական տարբեր ուժեր երբեմն դիվիդենդներ շահելու համար բավականին ընդդիմադիր դիրքերից խոսում են գիտության ոլորտում գոյություն ունեցող ֆինանսավորման սղության եւ այլ խնդիրների վերաբերյալ: Եվ այդ ուժերը ոչ միայն ընդդիմադիր դաշտում են գտնվում, այլեւ կոալիցիայի ներսում:

Aravot.am-ը ԲՀԿ ներկայացուցիչ Միքայել Մելքումյանից եւ ՕԵԿ ներկայացուցիչ Հովհաննես Վահանյանից հետաքրքրվեց՝ ի՞նչն էր իրենց կուսակցություններին խանգարում, որպեսզի ԱԺ-ում այս հինգ տարիների ընթացքում գտնվելով՝ չկարողացան լուծել այն խնդիրները, որոնք առաջադրել էին իրենց նախկին քաղաքական ծրագրերում: Երկու գործիչներն էլ սկսեցին դժգոհել, թե իրենց խանգարել է ԱԺ-ում եւ կառավարությունում ունեցած ոչ բավարար չափով ներկայացվածությունը: Երբ Aravot.am-ը խնդրեց կոալիցիոն գործընկերներ-կուսակցությունների ներկայացուցիչներին նշել գիտության ոլորտում գեթ մեկ խնդիր, որը կարողացել են լուծել, նրանք այդպես էլ դա չկարողացան անել: Մ. Մելքումյանն ընդամենը ասաց, որ իրենց պատգամավորներն ակտիվ են աշխատել ԱԺ-ում, Հ. Վահանյանն էլ՝ թե խնդիրները մեկ օրում չեն լուծվում:

ՏԱԹԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Քաղաքական ուժերի հիստերիկ պահվածքը պայմանավորված է սեռական կյանքի անբավարարությամբ

### Համոզված են մասնագետները

Այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ Մանկավարժական համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ Սամվել Խուդոյանը (աջից) խոսելով սեռական էներգիայի սուբլիմացիայից՝ նշեց, որ քաղաքական ոլորտում գոյություն ունի մոտիվացիոն համակարգ, մարդուն դրդող, որեւէ գործունեությամբ զբաղվելու պահանջմունքներ. «Կան քաղաքական գործիչներ, որոնց համար իրենց գործունեությունը որպես պաշտոն է, փող եւ այդ շղթայում նրանց գործունեությունը սեռական պահանջմունքի բավարարման միջոցն է»: Ս. Խուդոյանի ձեւակերպմամբ՝ ցանկացած պահանջմունք, եթե լիարժեք չի բավարարվում՝ ազդում է մարդու գործունեության վրա:




Բժշկական համալսարանի սեքսապաթոլոգիայի ամբիոնի վարիչ Սեւադա Հակոբյանի խոսքով էլ՝ այն անձինք, որոնք ընկղմված են իրենց աշխատանքի մեջ ու չեն տարանջատում հանգիստն ու աշխատանքը, խանգարվում են ներանձնային եւ միջանձնային փոխհարաբերությունները, որը եւ կարող է պատճառ դառնալ անձի բիոռիթմոլոգիայի ստատուսի խանգարման, ինչն էլ վատ անդրադառնա սեքսուալ կյանքի վրա. «Եթե անձն ունի ուժեղ սեռական կոնստիտուցիա՝ ներանձնային եւ միջանձնային ներդաշնակ փոխհարաբերություններ, ինչպես նաեւ աշխատանքային եւ հանգստի ռիթմի ճիշտ հարմոնիկ հերթակայում, ապա որեւէ սեքսուալ խնդիր չի առաջանա»:

Իսկ թե ընտրական շրջանի լարվածությունը ինչպես կանդրադառնա քաղաքական գործիչների վրա, Ս. Հակոբյանն ասաց. «Նրանք, ովքեր ստեղծագործող մարդիկ են, շփվում են հասարակության տարբեր շերտերի հետ, ունեն սեքսուալ մոտիվացիայի տիպի առանձնահատկություն՝ հեմեոստաբիլիզացիոն տիպ: Իսկ աշխատանքային գործունեությունը, անկախ մասնագիտությունից, որը պահանջում է լարված աշխատանք, անդրադառնում է սեքսուալ կյանքի վրա»:

Ս. Խուդոյանի փոխանցմամբ՝ ցանկացած պահանջմունքի անբավարարվածությունը ծնում է ագրեսիա, ինչն էլ դրսեւորվում է ամեն տեղ, այդ թվում՝ քաղաքականության մեջ. «Քաղաքական շատ ակտիվ մարդկանց մոտ հնարավոր է եւ իմպոտենցիա լինել, եւ գերակտիվություն. Նշեմ նաեւ, որ քաղաքական գործունեությունն այս բնազդի պահանջմունքի հիմքի վրա չի իրականանում: Բացի այդ՝ սեռական էներգիայի մակարդակը ինտելեկտի հետ կապ չունի, կան իմպոտենտ հանճարներ եւ հակառակը»:

Ըստ Ս. Խուդոյանի՝ քաղաքական դաշտը վերլուծել սեռական տեսանկյունից՝ հնարավոր չէ, որովհետեւ «դաշտում կան հիստերոիդներ, էպիլեպտոիդներ, շիզոիդներ եւ այլք, իսկ հասարակության համար վտանգավոր են հիվանդ տիպաժները, որոնք այսօր բավականին շատ են»:

ԵՎԱ ՀԱԿՈԲՅԱՆ